ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ПИСЬМА, ЗАМЕТКИ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ես նպատակից ժողովուրդների հետ միասին վերջին տարիներս բուռն պատմական զարգացման շրջան ապրող հայ ժողովրդի հոգևոր նվաճումներից է «Պատմա-բանասիրական հանդես»-ը: Նոր կյանք ստեղծող հայ ժողովուրդը «Հանդես»-ի էջերում վեր է հանում իր այսօրվա և անցյալի հուզող հարցերը և այդպիսով իր շուրջը հավաքում նաև սփյուռահայ պատմա-բանասիրական միտքը:

Ավելի է իրականում հաստատվում այն նշմարտությունը, որ խորհրդային Հայաստանն է աշխարհով մեկ ցրված բոլոր հայերի հայրենիքը:

Այդ իմաստով միանգամայն գովելի է սփյուռահայ լավագույն գիտնականների հոդվածների հրապարակումը «Հանդես»-ի էջերում:

Դա հանապարհ պետք է հարթի սփյուռահայ առաջադեմ գիտնականների առանձին երկերի հրատարակմանը խորհրդային Հայաստանում:

Ցանկալի է «Հանդես»-ի համարներում տեսնել սփյուռահայ գիտնականների պատմա-բանասիրական երկերի ցանկը:

Պետք է ավելի խոր կերպով «Հանդես»-ի հոդվածներում միս և արյուն ստանա գիտական օբյեկտիվությունը: Երևույթների խորքը թափանցելու, փաստերի ազնիվ և բարեխիղճ իմացության վրա հիմնված տեսական ընդհանրացումներ կատարելու ունակությունը պետք է ավելի խորապես թափանցի և այսօրվան, և՛ անցյալին նվիրված հոդվածներում:

Վինելի է հոդվածների դասակարգումը ըստ «Հանդես»-ի առաջին երկու բաժինների («Հոդվածներ» և «Հաղորդումներ»): «Հաղորդումներ» բաժնում շատ հաճախ տեղավորվում են հոդվածներ, իսկ «Հոդվածներ» բաժնում՝ հաղորդումներ:

Ցանկալի է, որ «Հանդես»-ը ևս, «Տեղեկագրի» նման, լույս ընծայի նաև սպագրված հոդվածների առանձնատիպեր:

Ամբողջ հոգով «Հանդես»-ին ցանկանում եմ նորանոր հաջողություններ հայ պատմաբանասիրական, ինչպես նաև փիլիսոփայական և գեղագիտական մտքի զարգացման ասպարեզում:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ
Լենինյան մրցանակի լաուրեատ,
ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ

«ԱՂԹԱՄԱՐԸ ԵՎ ԴԻԳԵՆԻՍ ԱԿՐԻՏԱՅԻՆ»

Վերջերս լույս տեսավ Ա. Բրայերի հոդվածը, որ վերնագրված է «Աղթամարը և Դիգենիս Ակրիտասը»[1]: «Դիգենիս Ակրիտաս» բյուզանդական վիպերգությունը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Բյուզանդիայի, այլ ոչ պակաս չափով նաև Հայոց պատմության, գրականության ու արվեստի ուսումնասիրության համար: Ստեղծված լինելով IX—X դարերում[2], Փոքր Հայքում, վիպերգությունը իր վրա է կրում հայ բանահյուսության ուժեղ կնիքը. գործող անձանց մեծ մասը ծագումով հայ են, դեպքերը տեղի են ունենում հիմնականում Փոքր Հայքում և Մեծ Հայքի սահակից շրջաններում: Բացի այդ, «Դիգենիս Ակրիտաս» վիպերգությունն ունի բազմաթիվ մերձեցման կետեր «Սասունցի Դավիթ» էպոսի հետ: Բյուզանդագետների համար «Դիգենիս Ակրիտասը» վաղուց դարձել է լուրջ ուսումնասիրության առարկա, նրան մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ: Ցավալին այն է, սակայն, որ հայագետները անհրաժեշտ ուշադրություն չեն դարձրել բյուզանդական վիպերգությանը: Մենք ձեռքի տակ ունենք հայագետների այդ վիպերգությանը նվիրված ընդամենը երկու դործ՝ Ն. Ադոնցի մեծարժեք աշխատությունը և Ա. Վ. Բանկի փոքր հոդվածը: Ա. Բրայերի ներկա հոդվածը, որի բովանդակությունն ենք շարադրում ստորև, մի անգամ ևս ցույց է տալիս, որ հայագետները լուրջ ուշադրություն պետք է նվիրեն «Դիգենիս Ակրիտասին»:

Ա. Բրայերը կանգ է առնում Վանա լճի Աղթամար կղզում գտնվող Սուրբ Խաչ եկեղեցու վրա, որ կառուցվել է Վասպուրականի Գագիկ Ծագավորի կողմից 915—921 թթ. ընթացքում, մի հուշարձան, որի նմանը, ընդգծում է հոդվածագիրը, ո՛չ Փոքր Ասիայում, ո՛չ Ասորիքում, ո՛չ Միջագետքում չի հանդիպում: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում, շարունակում է Ա. Բրայերը, նրա քանդակները[3]:

Այնուհետև նա անցնում է «Դիգենիս Ակրիտաս» բյուզանդական վիպերգության նկարագրություններ, շարադրում նրա ծագման մասին եղած տարբեր կարծիքները և, ի վերջո, ցույց տալիս այն ընդհանուր կապը, որ կա վերին Սիրատի ափին Դիգենիս Ակրիտասի կառուցած պալատի նկարագրության և Գագիկ Ծագավորի կառուցած (այժմ ավերակ) պալատի նկարագրության միջև, որ տալիս է Թոմա Արծրունին, ինչպես նաև Աղթամարի եկեղեցու պատկերաքանդակների և Դիգենիս Ակրիտասի պալատի պատկերաքանդակների միջև: «Այս զուգահեռները,—գրում է Բրայերը,—այդքան ակնառու չէին լինի, եթե եկեղեցու պատկերաքանդակները այնքան արտասովոր չլիներին»: Այնուհետև նա մեջ է բերում այգիների ու պարտեզների մեջ Գագիկ Ծագավորի կառուցած պալատի՝ Թոմա Արծրունու տված նկարագրությունը. «Հրամայէ թադաւորն շինել տաճար մի քառանկիւն, և կանգնաւ ունելով զչափ լայնութեան և երկայնութեան, նմանապէս և ի բարձրութիւնն. որոյ որմոյն լայնութիւնն երիւր մեծաքայլութեամբ չափով ունի զպարզուածսն, զունդ անապակ կրոց և քարի, իբրև զհալուածս կապարի և պղնձոյ բնդ միմեանս խառնեալ. և շինուած տաճարին ի հիմանց անտի մինչև ցգլուխ նորին ի քուիչս կազմեալ՝ առանց սեան ունի զհաստատութիւն. և է որ արդարև արժանի զարմանալոյ ի վեր քան զմիտս ունի և խորանս կամարակից և անկիւնս և շրջապատս գեղապաճոյճս, անթիւ մտաց և անգննելի աչաց. ունի և գումբէթս երկնահարթս ոսկեզարդս և լուսաճաճանչս...»[4]:

Դիգենիս Ակրիտասի ոսկեզարդ պալատը, որ շատ բանով նմանվում է Գագիկի պալատին, նույնպես տեղադրված էր նման շքեղազարդ պարտեզների մեջ: Դիգենիսի և Գագիկի պալատների նկարագրությունները մի քիչ լիրիկական են և անորոշ, նշում է Բրայերը, և կրում են Բյուզանդիայի կամ Արևելքի իդեալական պատկերացումը պալատի մասին: Բայց Աղթամարի տաճարի և Դիգենիսի պալատի նկարագարդության մեջ կան ավելի շատ ընդհանուր կապեր և...

---

[1] A. A. M. Bryer, Akhtamar and Digenis Akrites, „Antiquity", vol. 34, № 136 Dec. 1960, էջ 295—297.

[2] Մավրոգորդատոն գտնում է, որ վիպերգությունը վերջնականապես ձևավորվել է 1042—1054 թթ. ընթացքում: Այլ ուսումնասիրողներ այն համարում են ավելի վաղ շրջանի գործ:

[3] Աղթամարի մասին Բրայերը դիան հիմնականում Ս. Տեր-Ներսեսյանի Armenia and the Byzantine Empire (Cambridge, 1945), աշխատությունից:

[4] Տե՛ս Թոմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, Դ, 7 (էջ 481):

դեմիսի պալատի նկարազարդությունը մի արտառոց խառնուրդ է Հին կտակարանի և դասական սյուժեների։ Այսպես, Ագամեմնոնի և Ալեքսանդրի կողքին պատկերված են Սամսոնն ու Սավուղը։ Աղթամարի պատկերաքանդակները վերաբերում են գրեթե ամբողջությամբ, գրում է Բրայերը, Հին կտակարանի անձնավորություններին, կան որոշ տեսարաններ, վարի կենդանիներ, ինչպես Դիգենիսի պալատում։ Սուրբ Թեոդորոսի պատկերաքանդակը, որ կա Աղթամարում, հանդիպում է նաև Դիգենիսի պալատում։ Երկուսի մեջ էլ կա Սամսոնի կռիվը առյուծի հետ։ Դիգենիսի պալատում պատկերված է նաև

«Մովսեսի հրաշքները, և եգիպտացիների փորձությունները,
Հրեական ժողովրդի ելքը, մեղավոր տրտունջը,
Տիրոջ ցասումը...»

տեսարաններ, որոնք հանդիպում են նաև Աղթամարի նկեղեցու վրա։

Բյուզանդական պատկերաքանդակների մեջ հազվադեպ են, գրում է Բրայերը, ոչ միայն Դավիթն ու Գողիաթը, այլև Սավուղը։ Ահա այդ սյուժեները հանդիպում են Դիգենիսի պալատում, իսկ հայկական պատկերաքանդակների մեջ միայն մեկ անգամ՝ Աղթամարում, այն էլ նույնպիսի ձևով, ինչպես «Դիգենիս Ակրիտասի» մեջ։ Բյուզանդական վիպերգության մեջ, ի միջի այլոց, ասվում է.

«Կենտրոնում ներկայացված էր Դավիթը առանց զենքի,
Միայն պարսատիկը նա պատրաստ պահում էր ձեռքին.
Նրան կից էր Գողիաթը հսկա կառուցվածքով,
Հսկայի տեսքը զարհուրելի էր, նա անչափ հզոր էր,
Գլխից մինչև ոտքերը երկաթե զրահ էր կրում։
Նրա ձեռքում էր նիզակը, որ նման էր ջուլհակի գլանի,
Նկարիչը մեծ վարպետությամբ նույնիսկ երկաթի գույնն էր տվել,
Եվ այդ մարտի նկարագրությունը, թե
Ինչպես Գողիաթը բարի դիպուկ հարված ստացավ,
Ապա գլորվեց գետին, ինչպես
Դավիթը շտապեց նրա մոտ և բարձրացնելով թուրը
Կտրեց թշնամու գլուխը և հաղթանակով մարտն ավարտեց։
Այնուհետև ինչպես ցասումով լցվեց Սավուղը և ինչպես փրկվեց Դավիթը։
Բազմաթիվ դավերը և տիրոջ վրեժը»։

Իհարկե ոչ ոք չի կարծում, ավարտում է իր հոդվածը Ա. Բրայերը, թե Դիգենիսի հեղինակը նկարագրում է Աղթամարի պատկերաքանդակները։ Բայց եթե մի ակնարկ նետենք աշխարհագրական միջավայրի վրա, ինչպես նաև երկու հորինվածքների՝ Դիգենիս Ակրիտաս վիպերգության և Աղթամարի տաճարի ու պալատի կառուցման ժամանակագրական մերձավորության վրա և նկատի ունենանք այն, որ Աղթամարի՝ իր տեսակի մեջ Հայաստանում եզակի պատկերաքանդակները գտնվում են Դիգենիսի պալատի նկարագրության մեջ, այդ ամբողջը տալիս է մի բնդհանուր կապի հնարավորություն, որը պետք է նկատի առնվի։

Ա. Բրայերի հոդվածին կարելի է ավելացնել հետևյալը. ինչպես սկզբում ասացինք, Դիգենիս Ակրիտասի և Սասունցի Դավիթ պատմական վեպերի միջև կան բազմաթիվ մերձեցման կետեր։ Եվ եթե Բրայերը, որը կապ է գտնում Դիգենիսի և Դագիկի պալատների ու Աղթամարի բանդակների միջև, ծանոթ լիներ հայկական պատմական վեպին, կտեսներ, որ Սասունցի Դավիթ պատմական վեպի մի քանի պատումների համաձայն Անանասարի և Բաղդասարի մայրը «Աղթամարի» կամ «Վանա» թագավոր Դագիկի (908—934) դուստրն էր, այն Դագիկի, որի կառուցած եկեղեցու և պալատի ու Դիգենիսի պալատի միջև նա կապեր է գտնում, և այդ իմաստով նրա ենթադրությունը առավել ևս ճշմարտանման կլիներ։

Հ. ԲԱԼԱՅԵՎԱՆ

ՈՒՇ ԲՐՈՆԶԵ ԷՊՈՔԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՆԱՐԱՀԱՅԿԱՅԻՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Հայաստանում կատարվող հնագիտական ուսումնասիրություններն անցյալ տարի նշանավորվեցին պաշտամունքային մի շարք հուշարձանների հայտնաբերումով։

Այդ հուշարձանները հիմնականում քարե կուռքեր և ֆալլիկ քանդակներ են, շինարարական աշխատանքների ու հնագիտական ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված, և առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հին Հայաստանի տեղաբնիկների պաշտամունքի ուսումնասիրման գործում։

Ներկայումս Հայաստանում հայտնաբերված պաշտամունքային հուշարձանները կազմում են մի մեծ խումբ, որոնց առանձին օրինակները գտնվել են ռեսպուբլիկայի տարբեր հնավայրերում։ Զգալի թվով պաշտամունքային հուշարձաններ են հայտնաբերվել և նախկինում, Կարմիր-բլուրի (Թեյշեբաինի)[1], Դվինի[2] պեղումների ժամանակ և պատահարար՝ Աղջա-ղալա (Էջմիածնի շրջան) գյուղում։

Այս հուշարձանները հիմնականում պաշտպանության ու երկրագործական պաշտամունքի առարկաներ են, որոնց մասին ազգագրական տվյալները անհամեմատ լավ են պահպանվել Հայաստանում։

Մենք այստեղ բերում ենք 1961 թ. Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերված պաշտամունքային հուշարձանների միայն համառոտ նկարագրությունը։

Նկ. 1. Գորիսի շրջանում հայտնաբերված կուռքը

Քարե կուռքերից մեկը հայտնաբերվել է Գորիսի շրջանի Յայջի գյուղում՝ շինարարական աշխատանքների ժամանակ և ներկայումս պահվում է տեղի գավառագիտական թանգարանում (նկ. 1)։

Կուռքը կերտված է սպիտակագորշ բազալտից, ունի 76 սմ բարձրություն և բավականաչափ հինգ դիմաքանդակ։

Վնասված են կուռքի հինգ դեմքերից երեքի կզակների ներքևի ծայրերը և բոլորի քթերը։

Բոլոր դեմքերի քանդակման սկզբունքը, ինչպես և համամասնության պահպանման նույնությունը, ընդհանուր է, դեմքերը կրկնում են մեկը մյուսին։ Դեմքերը՝ մեկ ընդհանուր գլխով և մեկ ընդհանուր պլանաձև պարանոցով հենվում են բառակուսի պատվանդանի վրա և տեսանելի են բոլոր կողմերից։

Դիմաքանդակների վրա պարզորոշ երևում են դուրս ընկած, փոքր կոր, սակայն լայն ճակատը, խորաքանդակ աչքերն ու բերանը, սուր ցցված քիթը։ Դեմքերը լայն են և քանդակման հիմնական սկզբունքով հավասար բոլոր մասերում։

Դեմքերի կզակները սուր են, դուրս ցցված և չեն միանում պարանոցին։ Հավանարար քարե այս կուռքը դրված է եղել պաշտամունքային որևէ շինության մեջ, կենտրոնական մասում։

Մեկ ուրիշ քարե կուռք հայտնաբերվել է Կիրովականի շրջանի Լեռնապատ գյուղում և ներկայումս ցուցադրված է Կիրովականի գավառագիտական թանգարանում[3]։

Լրիվ չպահպանված (կեսից կոտրված) այս արձանը մոխրագույն բազալտից է, ունի 35 սմ բարձրություն և 20 սմ լայնություն։

---

[1] А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961; В. С. Сорокин. Древние идолы города Тейшебаини, Известия АН АрмССР, № 5, 1951.

[2] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, հատ. I։

[3] Կուռքը հայտնաբերվել է ազգագրագետ Վ. Բդոյանի կողմից։

Ասանո բնակի դեմքի վրա պարզ երևում են բարձրաբանդակ բիլը և խորաքանդակ աչքերը։ Դեմքը հարթ է, վերին մասում նեղ, իսկ ստորինում՝ լայն։ Արձանը ամրողջական դլան է։ Վերի ձախ կողմում պարզորոշ երևում է բառակուսի ականջը։

Ասանձնակի հնավայրերում են ներկայացնում 1961 թ. Էջմիածնի շրջանի Ձկլվա գյուղի մոտ գտնվող Կրպըլ-Քափա բլրից մեր հայտնաբերած պաշտամունքային հուշարձանները։

Այդ հուշարձաններից մեկը մուգ ցորնագույն տուֆից բանդակված մի բառակող կոթող է 1 մ 50 սմ բարձրությամբ և 30 սմ հաստությամբ ու հանդիսանում է ներկայումս միակ պահպանված, ամրողջական կուռքը Հայաստանում (նկ. 2)։

Այս բարև կուռքը հարթ, պրիմիտիվ բանդակագործության լավագույն նմուշներից մեկն է և ձևավորման հատկանիշներով բիլ է տարբերվում վերը նկարագրած Գ-րիսի և Կիրովականի շրջաններից հայտնաբերված կուռքերից։

Քառակող հարթ բարի վրա երևում են օվալաձև, կզակի մասում սրվող բարձրաքանդակ դեմքը, մի հնարով կերտած ուղիղ բիլը և հատիկ նշմարելի խորաքանդակ աչքերն ու բերանը։



Նկ. 2. Քարե կուռք Կրպըլ-Քափայից

Գոթողի վերին մասում, գլխի մոտ, երկու կողմերից երևում են բարձրաբանդակ օվալաձև ականջները և նրանից ցած՝ մեծ ականջօղերը։

Հարթ մարմնի վրա հատիկ նշմարվում է պարանոցը, որի վրայով, կոթողի բոլոր կողմերից անցնում են չորս սիմետրիկ գծեր, որոնք հավանաբար որպես ուլունքներ զարդարում են կուռքը։ Արձանի հետագա կողմում, գլխի հետևում և ձախ կողմում, ականջի փոխարեն պահպանվել են իրար միացող երկու փոսիկներ։

Կրպըլ-Քափայից հայտնաբերված կուռքերի մեջ եզակի օրինակ է նաև հետագա կնոջ կավե մասիվ արձանիկը, որի ստորին և առջևի մասերը լավ չեն պահպանվել (նկ. 3)։ Ներն ունի 15 սմ բարձրություն և 8 սմ լայնություն ու լինելով նույնպես հարթ, պրիմիտիվ բանդակագործության նմուշ, իր ձևավորման հիմնական սկզբունքներով կրկնում է նախորդ, վերը արդեն նկարագրած բանդակներին։



Նկ. 3. Կնոջ կավե արձանիկ Կրպըլ-Քափայից

Հարթ, կլոր դեմքի վրա հագիվ նշմարվում է ճակատը և նրա վրայից մինչև պարանոցը իջնող, մազերը պատկերող զարդանկարը։ Դեմքի վրա դուրս է ցցված մեծ և կոր բիթը, որի երկու կողմերում և անմիջապես տակը երևում են սուր գործիքով փորված աչքերն ու բնրանը։ Պարանոցը ծածկված է ուլունքների մի հաստ շարրով։ Արձանի մարմնի վրա, ուղիղ կենտրոնում, երևում է հավանարար հագուստը կամ կրծքակալը պատկերող ուղղանկյուն, հորիզոնական գծերով զարդանկար։ Կրծքակալի երկու կողմերից, պարանոցից սկսած, իջնում են երկուական իրար զուգահեռ գծեր։ Արձանի ստորին մասի վրա, բոլոր կողմերից փորագրված են զարդանկարներ։

Նկարագրված պաշտամունքային հուշարձաններն իրենց բանդակման ոճով, նպատակներով ու ձևավորումով լավագույն զուգահեռներն են գտնում Կարմիր-բլուրից և Դվինից հայտնաբերված կուռքերի։

Այսպիսի զուգահեռների գոյությունը մատնանշում է նաև այդ հուշարձանների թվագրությունը, որն արդեն ճշտված է ուսումնասիրողների կողմից, այն է՝ XIII—XII դդ. մ. թ. ա.[1]։

Լ. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ

---

[1] А. А. Мартиросян, Идолы из раскопок Кармир-блура, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 136—138։